Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

12.09.2013
17 FEB 2010
336.3
Խ-11

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԽՍՀՄ ՑԺԿ-ի Տեղակալ՝
ԳՑՆԿԻՆ
3-ի մայիսի 1931 թ.

Պաշտոնական հրատարակություն

«ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է»
ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից պետվար-
կին և խնայգործին օժանդակող
կենտր. հանձնաժողովի նախագահ
Ս. ՉՈՒՑԿԱՅԵՎ.

# ՀՐԱՀԱՆԳ № 171.

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՄԱՍԻ (выпуск) «ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-Դ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ» ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

(Հրատարակված է ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի «Հընգամյակը չորս տարում» փոխառության 2-րդ մասի բաց թողման մասին կայացրած վորոշման հիման վրա).

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

1. *Փոխառության իրացումը կատարվում է լրիվ կամավոր սկզբունքներով, լայն մասսայական և ագիտա-բացատրական աշխատանքների հիման վրա:*

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2. *Փոխառության իրացման կամպանիան տարածվում է 1931 թ. հունիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը: Այդ ժամանակաշրջանում պետք ապահովված լինի աշխատավորների 100 տոկոսային ընդգրկումը փոխառության մեջ: Սակայն, փոխառության իրացումը չպետք է սահմանափակվի այդ ժամանակաշրջանով:*

ՀՍԽՀ — ՍՊՐՑ
ԽՄ. Ա. Մ...
14608-57

27974

Ֆինանս-վարկային ապարատը, հաշվապահական և տնտեսական կազմակերպությունները, խնայողական գործին և պետական վարկին օժանդակող հանձնաժողովները պետք է տանեն մշտական և կենդանի աշխատանքներ, փոխառության մեջ ընդգրկելու բոլոր այն բանվոր-ծառայողներին, վորոնք նոր են ներգրավվում արտադրության, շինարարության և ապարատի մեջ:

Ծանոթություն.—Գյուղական հիմնարկ-ձեռնարկների բանվոր-ծառայողների մեջ, փոխառության իրացումը կատարվում է քաղաքային բանվոր ծառայողների կոլեկտիվների համար սահմանված պայմաններով և ժամկետներում:

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԸ ՔԱՂԱ-ՔՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՏԻՊ ՎԱՅՐԵՐՈՒՄ

3. Փոխառության կամպանիայի կազմակերպման ընդհանուր ղեկավարությունն ու անցկացնելու պատասխանատվությունը դրվում է ֆինանսական օրգանների վրա: Փոխառության իրացման ագիտ-մասսայական և կազմակերպչական-գործառնական աշխատանքները տարվում են Ֆինժողկոմատի օրգանների կողմից, Պետաշխատավորական խնայողական դրամարկղների և Պետական Բանկի գլխավոր վարչության հիմնարկների ցանցի միջոցով: Աշխատավորական կոլեկտիվներում և ազգաբնակչության առանձին խմբակների մեջ, փոխառության տեղավորման աշխատանքների կազմակերպումը դրվում է ֆինանսական օրգանների, պետական աշխատավորական խնայողական դրամարկղների և Պետբանկի հիմնարկների վրա:

Վարկային հիմնարկները փոխառության իրացումը կատարում են սույն հրահանգով սահմանված կարգով և պայմաններով:



Փոխառության իրացման բոլոր հաշվե-դրամարկղային ֆունկցիաները և պարտատոմսերի մատակարարումն իրականացնում են Պետբանկը և նրա տեղական հիմնարկները:

Փոխառության իրացման հաշվառման և հաշվետվության ու պարտատոմսերի մատակարարման կարգը սահմանված է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի և Պետբանկի վարչության հատուկ շրջաբերականով:

Վարկային հիմնարկների պատասխանատվությունը՝ փոխառությունների իրացման վերաբերյալ սահմանված պայմանների կատարման համար, վորոշվում է սույն հրահանգով և վերը հիշատակված շրջաբերականով:

4. Փոխառության սպասարկման հստակությունն ապահովելու համար, աշխատավորական կոլեկտիվները և քաղաքային ազգաբնակչության առանձին խմբերը պետք է բաշխվեն վարկային հիմնարկների միջև:

Մինչև կամպանիայի սկսելը, Պետական աշխատավորական խնայողական դրամարկղների և Պետվարկի գլխավոր վարչության հիմնարկները կազմում են իրենց տերիտորիայի վրա ընկած կոլեկտիվների ընդհանուր ցուցակը, ուր պետք է անցկացվի փոխառության բաժնեգրությունը: Բաշխումը կատարվում է ֆինմարմինների վարիչների կողմից, համաձայնեցնելով այդպիսին պետաշխնայդրամարկղների և Պետվարկի գլխավոր վարչության և Պետբանկի տեղական հիմնարկների հետ: Բաշխման ժամանակ անպայմանորեն պետք է հաշվի առնել վարկային հիմնարկի տեխնիկական և կազմակերպչական հնարավորությունները, ապահովելու փոխառության լրիվ և հստակ սպասարկումը թե

բանվոր-ծառայողների կոլլեկտիվներին և թե քաղաքային ազգաբնակչության այլ խմբերին։

Յուրաքանչյուր վարկային հիմնարկություն պարտավոր է իրեն ամրացված կոլեկտիվներում տանել հաշվառում, փոխառության աշխատանքների դրության մասին։ Հաշվառումը կատարվում է ձև № 5 անձնական հաշիվներով, վորոնք բացվում են վարկային հիմնարկների կողմից, յուրաքանչյուր կոլեկտիվի համար, բաժնեգրությունը ձևակերպելուց հետո։ Հաշվի յեն առնվում՝ կոլեկտիվի անդամների քանակը, կոլեկտիվի աշխատավարձի ֆոնդը, բաժանորդների թիվը, բաժնեգրությամբ ընդգրկված տոկոսը։ Վարկային հիմնարկները պարտավոր են ճշտել այդ տեղեկությունները յուրաքանչյուր յերկու ամիսը մեկ անգամ։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Փոխառության իրացումը քաղաքում և քաղաքատիպ վայրերում կատարվում է կոլեկտիվ և անհատական բաժնեգրությամբ, ժամկետներով և կանխիկ վճարով՝ պարտատոմսերի արժեքի միանվագ վճարումով։

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ.

### ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

6. Կոլեկտիվ բաժնեգրությանը մասնակցելու իրավունք ունեն ազգաբնակչության հետևյալ խմբերը.—

ա) բանվորներն ու ծառայողները՝ իրենց հիմնարկների, ձեռնարկների և կազմակերպությունների միջոցով.



բ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, Կարմիր Նավատորմիղի, Միացյալ Պետքաղվարչության, միլիցիայի և պահակային զորքի անձնական կազմը՝ իրենց մասերի, մարմինների և հիմնարկների միջոցով.

գ) արտելներում և արհեստակցական կոոպերատիվներում կազմակերպված տնայնագործները՝ իրենց կոոպերատիվ միավորների միջոցով.

դ) ուսանողներն ու աշակերտները՝ իրենց ուսումնական ձեռնարկության միջոցով.

ե) ազատ զբաղմունքի տեր անձինք՝ իրենց միավորող կազմակերպությունների միջոցով.

զ) թոշակառուները՝ իրենց թոշակ տվող ապահովագրական և խնամատարական դրամարկղների միջոցով.

է) ընտրական իրավունքով օգտվող քաղաքային անկազմակերպ ազգաբնակչությունը՝ բնակարանային ընկերությունների, տրեստների, բնակշինկոոպմիությունների, նաև տնային վարչությունների միջոցով։

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Կոլեկտիվ բաժնեգրության ժամանակ պարտատոմսերի համար վճարման ժամկետ է տրվում մինչև 10 ամիս, այն հաշվով, վորպեսզի բաժնեգրության վերջնական հաշիվը կատարվի 1932 թ. հունիսի մեկից վոչ ուշ։ Քաղաքներում, կոլեկտիվ բաժնեգրության կամպանիան անհրաժեշտ է հիմնականում ավարտել 1931 թ. առ 1-ն օգոստոսի, այն հաշվով, վորպեսզի բանվոր-ծառայողների կոլեկտիվ բաժնեգրության առաջին մուծումը կատարվի օգոստոս ամսվա առաջին կիսամսյակի աշխատավարձից։

Այդ ժամկետին համապատասխան, կատարվում է անկազմակերպ բնակչության, տնայնագործների և այլոց առաջին մուծումը: Ըստ կոլեկտիվ բաժնեգրության վերջին մուծումը պիտի կատարվի 1932 թ. հունիսի մեկին (մայիս ամսվա յերկրորդ կիսամսյակի աշխատավարձից): Հետևապես, վորքան շուտ կատարվի առաջին մուծումը, այնքան յերկար կլինի մուծման ժամկետը: Ժամկետի տևողությունը (մինչև 1932 թ. հունիսի մեկը ժամանակի սահմաններում) և հերթական մուծումների չափը յուրաքանչյուր կոլեկտիվի համար վորոշվում է նրանով, թե յերբ է կատարում կոլեկտիվն առաջին մուծումը:

8. Ըստ անվանական արժեքի, պարտատոմսերի վաճառքը կոլեկտիվ բաժնեգրության կարգով, կատարվում է մինչև 1931 թ. դեկտեմբերի մեկը: Իսկ այդ ժամանակից սկսած՝ ԽՍՀՄ ԿԳՀ-ի և ՀԿԳԿ-ի «Իզվեստիա» թերթում հրապարակվող տեղեկատու գներով:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Կոլեկտիվ բաժնեգրությամբ, պարտատոմսերի արժեքի մաս-մաս վճարումը կատարվում է կես ամսյա կամ մեկ ամսյա մուծումներով, նայած, թե կոլեկտիվներում աշխատավարձը յերբ է տրվում, կամ յերբ է հաշիվը փակվում բաժանորդի հետ (տնայնագործ, անկազմակերպ բնակչությունը և այլն): Բաժանորդի հերթական մուծումների չափը վորոշվում է նրա բաժնեգրման գումարը բաժանելով աշխատավարձի ստացման կամ պարտատոմսերի համար հաշվարկումների թվի վրա, վորոնք էլ ընկնում են մաս-մաս վճարման ամբողջ ժամանակի՝ մինչև 1931 թ. հունիսի մեկը տևողության ընթացքում:



Հաշվարկումների պարզեցման համար բաժանորդի մուծումների չափը պիտի սահմանել կլոր ռուբլիների գումարով և միայն անհրաժեշտության դեպքում՝ կոպեկներով, կլորացնելով մուծումը մինչև 50 կամ 25 կոպ.:

Աշխատանքի նոր ընդունվող բանվոր-ծառայողը, փոխառությանը բաժնեգրվելիս, վորոշում է իր բաժնեգրության գումարն այն հաշվով, վորպեսզի պարտատոմսերի վճարումն ավարտվի միաժամանակ ամբողջ կոլլեկտիվի հետ, այն է՝ 1931 թ. հունիսի մեկին:

Տեղեկատու գներով, պարտատոմսերի հաշվարկման ժամանակ (1931 թ. դեկտեմբերի մեկից հետո), բաժանորդներն առաջին մուծման հետ միասին, վճարում են պարտատոմսերի տեղեկատու և անվանական արժեքների տարբերությունը:

## ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

10. Առաջին մուծումը կատարելուց հետո, բաժանորդն իրավունք է ձեռք բերում շահումների կամ տոկոսների ձեվով, պարտատոմսերի ստացվող յեկամտի վրա այն պայմանով, յեթե նա պարտատոմսերի արժեքի դիմաց հերթական մուծումները կատարում է ժամանակին:

Փոխառության անկորուստ (беспроигрышный) մասի բաժանորդին՝ այդ մասի պարտատոմսերի ամրացումը կատարվում է առաջին մուծումը վճարելուց հետո:

Մինչև շահումների հերթական վիճակահանության ժամկետի հասնելը, բաժանորդն ստանում է ամրացման կտրոններ՝ պարտատոմսերի համարներով, հեր-

թական և դրան հաջորդող վիճակահանությունների մասնակցելու համար:

Բաժանորդն իրավունք ունի ստանալու նրան տրված, կտրոնում հիշատակված պարտատոմսերը, միայն պարտատոմսերի լրիվ արժեքը մուծելուց հետո: Այն բաժանորդը, որին ամրացման կտրոնները կորցնում է, իրեն ամրացված պարտատոմսերն ստանալու իրավունքից չի զրկվում: Այդ դեպքում պարտատոմսերի համարները վերականգնվում են վարկային հիմնարկներում պահվող կտրոնների արմատների միջոցով: Բաժանորդն իր հիմնարկի կամ ձեռնարկի միջոցով ստանում է վարկային հիմնարկից իրեն ամրացված պարտատոմսերի համարների ցուցակը: Փոխառության տոկոսաբեր մասի բաժանորդին, ամրացման կտրոններ չեն տրվում: Բաժանորդն ստանում է առձեռն տոկոսաբեր մասի պարտատոմսերը, այդպիսիների լրիվ արժեքը մուծելուց հետո:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԻՆՉ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄԸ

11– Բաժանորդը կարող է մինչև ժամկետը վճարել իր բաժնեգրության մի մասը, կամ ամբողջ գումարը և ստանալ լրիվ կերպով, արժեքը վճարված պարտատոմսերը:

Բաժանորդին հնարավորություն է տրվում նույնպես մինչև ժամկետը վճարել պարտատոմսի արժեքը և մինչև բաժնեգրության հաշվարկման ավարտելն ստանալ առձեռն, իրեն ամրացված անտոկոս մասի պարտատոմսերից, եթե պարտատոմսը շահել է:

Այն դեպքում, երբ շահած պարտատոմսի արժե–



քը լրիվ չի վճարված, պակասորդ գումարը կարելի է լրացնել՝ պահելով շահած գումարից:

Պարտատոմսերի մինչ ժամկետային վճարումը բաժանորդը կատարում է իր հիմնարկի կամ ձեռնարկի միջոցով:

## ԿՈԼԼԵԿՏԻՎԻՑ ՀԵՌԱՑՈՂ ԲԱԺԱՆՈՐԴԻ ՀԵՏ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Եթե բաժանորդը հեռանում է տվյալ կոլեկտիվից, ապա պարտատոմսերի համար հաշվարկումը նրա հետ կատարվում է հետևյալ կարգով.

ա) բաժանորդը կարող է վճարել իր բաժնեգրության լրիվ գումարը և ստանալ լրիվ վճարված պարտատոմսերը.

բ) այն դեպքում, երբ բաժանորդը պարտատոմսերի իր ամբողջ պարտքը լրիվ չի մուծում, նրա հետ կատարվում է բաժնեգրության մասնակի հաշվարկում, ընդ որում, նրան տրվում է մինչև կոլեկտիվից հեռանալը, նրանից գանձված գումարի համեմատ պարտատոմսեր:

Ծանոթություն.— 1. Եթե պարզվում է, որ բաժանորդին ամրացված պարտատոմսերը խոշոր կուպյուրավոր են և դրա հետևանքով չեն կարող մարվել բաժանորդի կողմից կատարված մուծման գումարներով, ապա վարկային հիմնարկը փոխանակում է խոշոր կուպյուրավոր պարտատոմսը մանր կուպյուրավոր պարտատոմսերով, որպիսիք տրվում են բաժանորդին, հիմնարկի վարչության միջոցով: Բաժանորդին չհանձնված պարտատոմսերի ամրացման կտրոնները բաժանորդը պարտավոր է վերադարձնել հիմնարկ-ձեռնարկի վարչությանը, այդպիսիք վարկային հիմնարկությանը հանձնելու համար:

2· Եթե բաժանորդի մուծումների ամբողջ գումարը չի բաժանվում 5-ի, ապա նրանից գանձվում է 5 ռուբլանոց կուպյուրի արժեքը լրացնող գումարը (օրինակ, ամենափոքր կուպյուրի արժեքն է 5 ռուբլի, բաժանորդը մուծել է 24 ռուբլի՝ ի դիմաց 50 ռուբլու բաժնեգրության: Կոլեկտիվից հեռանալիս, իր բաժնեգրության հաշիվները փակելու ժամանակ նա պարտավոր է մուծելու ևս 2 ռ., 25 ռուբլու պարտատոմսեր ստանալու համար):

## ԲԱԺԱՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13· Եթե բաժանորդն առանց հարգելի պատճառի վորոշված ժամկետին չի կատարում իր հերթական մուծումը, ապա նա զրկվում է իրեն ամրացված պարտատոմսերի իրավունքից և շահումների ու տոկոսների ձևով ստացվելիք յեկամուտից: Այդ դեպքում բաժանորդին ամրացված անկորուստ մասի պարտատոմսերը հետամրացվում են (раскрепляются): Եթե մինչև վերջին մուծման օրը բաժանորդին վաղուց ամրացված պարտատոմսը շահում է, ապա այդ շահումը պատկանում է բաժանորդին: Պարտատոմսերի հետամրացումը կատարվում է ժամկետը լրանալուց 20 օր հետո: Հետամրացման դեպքում, վարկային հիմնարկությունը, բաժանորդի մուծումների ամբողջ գումարի համեմատ ամրացնում է նրան անկորուստ մասից այլ պարտատոմսերով, նախորոք ստուգելով մինչ այդ տեղի ունեցած վիճակահանությունների շահման աղյուսակներով: Եթե բաժանորդի մուծումների գումարը չի բաժանվում 5-ի, ապա վարկային հիմնարկն ամրացնում է բաժանորդին անվանական գումարով պար-



տատոմսեր, կլորացնելով մինչև 5 ռուբլիանոց կուպյուրն այնպես, վոր բաժանորդը ներկայանալիս, մուծի 5 ռուբլիանոց պարտատոմսի արժեքը լրացնող պակասորդ գումարը: Պարտատոմսերն ստանալու համար բաժանորդը պարտավոր է ներկայացնել հիմնարկ-ձեռնարկի տեղեկանքն իր մուծած գումարների մասին:

Ծանոթություն·—Մուծումը ժամանակին չկատարող բաժանորդը, կարող է 20 օրվա ընթացքում ներկայացնել ոժանդակող հանձնաժողովին տեղեկանք այն մասին, վոր մուծումը ժամանակին չի կատարել հարգելի պատճառով: Այդ դեպքում վարկային հիմնարկն իրավունք ունի, ընդունելու բաժանորդից ժամկետանց մուծումը: Ժամկետանց մուծումն ընդունելու դեպքում, բաժանորդին իրավունք է վերապահվում ստանալու իրեն ամրացված պարտատոմսերի յեկամուտը:

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14· Կոլեկտիվներում ագիտ-բացատրական աշխատանքի անցկացումը և բաժնեգրության կազմակերպումը դրվում է պետվարկի և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովի վրա: Կոլեկտիվի յուրաքանչյուր բաժանորդ իր բաժնեգրության գումարը վավերացնում է բաժնեգրման թերթի մեջ (ձև № 4) ստորագրությամբ: Լրացված բաժնեգրման թերթերը հանձնվում են հիմնարկ-ձեռնարկի կամ կազմակերպության վարչությանը՝ բաժնեգրությունը ձևակերպելու և հաշվարկում կատարելու համար: Վարկային հիմնարկներում, կոլեկտիվ բաժնեգրության ձևակերպելը և բաժնեգրության նկատմամբ բոլոր դրամական հաշիվները պահելը, դրվում է հիմնարկ-ձեռնարկների և կազմակերպությունների վրա:

Ոժանդակող հանձնաժողովները չեն կարող իրենց վրա վերցնել բաժնեգրության վերաբերյալ վորևէ դրամական հաշիվների կատարում:

15. Ոժանդակող ստորին հանձնաժողովները, կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպման աշխատանքները տանում են ոժանդակող վերադաս հանձնաժողովների ղեկավարությամբ:

Ֆինանս-վարկային հիմնարկների պարտականությունների մեջ են մտնում ոժանդակող ստորին հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը և նաև այդ հանձնաժողովների և հիմնարկ-ձեռնարկների հաշվային ապարատի մանրամասն տեխնիկական հրահանգումը՝ բաժնեգրությունը տանելու և բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումներ կատարելու կարգի մասին:

Ծանոթություն.—Բաժնեգրման թերթերով և բաժնեգրման այլ նյութերով մատակարարումը ոժանդակող ստորին հանձնաժողովներին կատարում են վարկային հիմնարկները:

16. Կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկման ամբողջ ժամանակաշրջանում ոժանդակող հանձնաժողովները պիտի տանեն սիստեմատիկ աշխատանք հիմնարկ-ձեռնարկն ընդունվող բոլոր նոր բանվոր-ծառայողներին ներգրավելու փոխառության մեջ: Ստանալով վարչությունից յուրաքանչյուր ամիս նոր ընդունված բանվոր-ծառայողների մասին տեղեկություն, ոժանդակող հանձնաժողովները ձեռք են առնում բոլոր միջոցները, ագիտացիոն կարգով կոլեկտիվի նոր անդամներին ներգրավելու փոխառության բաժնեգրության մեջ: Ոժանդակող հանձնաժողովներն ապահովում են այլ հիմնարկ-ձեռնարկներից փոխադրված բանվոր-ծառայողների ընդգրկումը փոխառության մեջ:

Նոր ընդունված և բաժնեգրված աշխատավորների բաժնեգրման թերթերը հանձնվում են վարչությանը, բաժնեգրությունը ձևակերպելու և բաժանորդների ու վարկային հիմնարկների հետ հաշվարկում կատարելու համար:

## ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ՝ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈԳՏԻՆ

17. Բաժնեգրությունը կազմակերպող ստորին ոժանդակող հանձնաժողովներին հասնում է 0,15 տոկոս այն ընդհանուր գումարից, վորքով կոլեկտիվը վճարում է պարտատոմսերի համար: Ոժանդակող հանձնաժողովները կոլեկտիվներում՝ փոխառության աշխատանքների հետ կապված ծախսերը ծածկում են մասհանման գումարներից: Յեթե հանձնաժողովն սպասարկում է վոչ մեծ կոլեկտիվներ, վորոնց բաժնեգրության ընդհանուր գումարը հասնում է մինչև 10.000 ռուբլու, ապա նրանց մասհանումները կարող են դրվել տեղական գործկոմին կամ խորհրդին կից ոժանդակող հանձնաժողովի տրամադրության տակ: Նման մասհանումների հանձնման խնդիրը լուծում է գործկոմին կամ խորհրդին կից ոժանդակող հանձնաժողովը:

Հիշված մասհանումները հանձնում են ոժանդակող հանձնաժողովներին այն վարկային հիմնարկները, վորտեղ ձևակերպված է կոլեկտիվի բաժնեգրությունը: Մասհանումները տրվում են յերկու նվագ՝ կամպանիան վերջացնելուց հետո, այսինքն՝ 1931 թվի ոգոստոսի 1-ից հետո վարկային հիմնարկները տալիս են ի հաշիվ ապագա վճարելիք գումարի 0,1 տոկոսը բաժ-

նեգրության ընդհանուր այն գումարից, վորը ձեվակերպված ե կոլեկտիվի կողմից: Մասհանումների նկատմամբ վերջնական հաշվարկում կատարվում ե կոլեկտիվների հետ հաշիվները փակելուց հետո, այսինքն՝ 1932 թվի հունիսի 1-ից հետո: Վերջնական հաշվարկման ժամանակ, հանձնաժողովին տրվում ե կոլեկտիվների կողմից փաստորեն մուծված գումարներից 0,15 տոկոսը, դուրս գալով մինչ այդ դրա դիմաց բաց թողնված գումարը:

Ծանոթություն.—Այն անձինք, վորոնք հասարակական կարգով ընդգրկվում են փոխառության աշխատանքների մեջ (ինչպիսիք են՝ հասարակական ինստրուկտորները, խորհուրդների սեկցիաների լիազորները, և այլն) մասհանումներ չեն ստանում: Նրանց վրա տարածվում ե փոխառության իրացման աշխատանքների համար պարգեվատրելու կարգը՝ պարգեվատրման կարգը սահմանված ե հատուկ կանոնադրությամբ:

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Բաժանորդի՝ բաժնեգրման թերթիկով տրված հանձնարարության հիման վրա, հիմնարկ-ձեռնարկը կամ կազմակերպությունը փոխառության բաժնեգրված կոլեկտիվի անդամ բանվոր-ծառայողների հետ կատարում են հետեվյալ հաշվարկումը. Հիմնարկ-ձեռնարկի վարչությունը պահում ե բաժանորդի աշխատավարձից փոխառության պարտատոմսերի հերթական մուծումները: Տնայնագործական-արհեստագործական արտելների (կոոպերատիվների) վարչություն-



ները կատարում են գանձումներ՝ բաժանորդին հասանելիք վճարումներից:

Այլ կազմակերպությունների վարչությունները, վորոնք կոլեկտիվի անդամների հետ չեն կապված դրամական հաշվարկումներով, այդպիսիք բաժանորդներից հավաքումներ են կատարում ի դիմաց պարտատոմսերի հերթական մուծումների:

Հիմնարկ-ձեռնարկները բաժանորդներից գանձումները կատարում են այն պահանջագրերով, վորոնցով վճարում են աշխատավորների աշխատավարձը:

Իսկ մյուս կազմակերպությունները բաժանորդներից հավաքվող գումարները գանձում են համապատասխան հաշվարկման պահանջագրերով, վորոնք պիտի բացվեն բաժնեգրման թերթերի հիման վրա:

Առաջին և հաջորդող հերթական մուծումների գանձումներն ու պահումները բաժանորդներից կատարվում են սույն հրահանգում հիշատակված 7–9 կետերի հիման վրա, կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկման ճիշտ համապատասխանող պայմաններով:

Յեթե բաժանորդին աշխատավարձը տրվում ե առաջ (որինակ՝ արձակուրդ, կամ կամանդիրովկա գնալիս), ապա նրանից հերթական մուծումները գանձվում են այն ժամանակի համար, վորի համար տրվում ե աշխատավարձը: Յեթե կոլեկտիվի անդամն ստանում ե իր աշխատավարձը Սոցապդանձարկղից՝ հիվանդության համար և չի կատարում իր հերթական մուծումները, ապա վերջիններս գանձվում են նրանից աշխատավարձի վճարումը վերսկսելիս, հավասարաչափ կերպով, մինչեվ բաժնեգրության հաշվարկման ավարտելը:

19. Բնակարանային կազմակերպություններում, վորոնցում մտցված է բնակարանային վարկի ստացումն անդրամային կարգով, պարտատոմսերի հաշվին հավաքվող մուծումները կատարվում են միաժամանակ բնակիչների կողմից մուծվող կոմունալ վճարումների հետ միասին: Վարչությունը կամ տնային կառավարչությունը բնակիչների բաժնեգրությունը ձևակերպում է այն վարկային հիմնարկում, վորպեսին սպասարկում է տվյալ բնակարանային կազմակերպությանը կամ տնային կառավարչությանը: Տնային կառավարչությունը կամ վարչությունը գրանցում է բնակվարձի հետ միասին նաև բնակվողներից հասանելիք մուծումների գումարը: Վարկային հիմնարկությունն ստանալով ծանուցագրերով և հաշվարկումներով մուծումները, փոխանցում է այդպիսիք համապատասխան վարկային հիմնարկներում գտնվող բնակարանային կազմակերպությունների վարչության կամ տնային կառավարչությունների ընթացիկ հաշվին, վորպեսի մուծումները հետագայում մտնում են բաժնեգրությունը: Այն դեպքում, յերբ բնակվողը ծանուցագրի համաձայն չի կատարում պարտատոմսերի հերթական մուծումը, այդպիսիների ժամկետը լրանալուց հետո, տույժ չի հաշվում:

20. Առաջին մուծումը կատարելու հետ միաժամանակ ադմինիստրացիան կամ վարչությունը հայտ է ներկայացնում վարկային հիմնարկությանը, ամբողջ կոլեկտիվի բաժնեգրության գումարին հավասար, կոլեկտիվի անդամների համար անվանական գումարի պարտատոմսեր ստանալու:

Հայտերը կազմվում են բաժնեգրության թերթերի հիման վրա:



Հայտերում պետք է նշվեն.

ա) կոլեկտիվի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական (НОМИНАЛ) գումարը.

բ) պարտատոմսերի գումարն ըստ փոխառության առանձին մասերի (անկորուստ և տոկոսաբեր) և ըստ կուպյուրների.

գ) կոլեկտիվը վորպիսի ժամկետներում և ինչ կարգով է կատարելու բաժնեգրության հաշվարկումները (չեկերով կամ փոխանցման հրամաններով, վո՞ր կոնտորենտ, կամ ընթացիկ հաշվից և վո՞ր վարկային հիմնարկում):

Վարկային հիմնարկները հայտերի հիման վրա կատարում են նախնական վերահսկումն կոլեկտիվների բաժնեգրության հաշվարկումների վրա և պահանջում են համապատասխան կուպյուրներով պարտատոմսեր, բաժանորդներին ամրացնելու համար: Հիմնարկ-ձեռնարկները կամ կազմակերպությունները ձևակերպվում են բաժնեգրությանն ոժանդակող հանձնաժողովներից բաժնեգրման թերթերն ստանալու որից հինգ օրվա ընթացքում:

Այն կոլեկտիվներում, ուր մուծումները պահվում են բաժանորդների աշխատավարձից, ոժանդակող հանձնաժողովները բաժնեգրման թերթերը հանձնում են վարչությանն այն հաշվով, վոր առաջին մուծումը պահվի բաժանորդների ոգոստոս ամսվա առաջին կեսի աշխատավարձից: Այլ կազմակերպությունների վարչությունները բաժանորդներից առաջին մուծումների հավաքումները կատարում, ինչպես բաժնեգրությունը ձևակերպում են վարկային հիմնարկներում՝ ոժանդակող հանձնաժողովներից բաժնեգրման թերթերն ստանալուց 10 օրվա ընթացքում:

21. Սահմանված առաջին մուծումը և բաժնեգրու-



ՀՍՍՀ – ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
14608-57

թյան մասին հայտը—վարկային հիմնարկությունը տալիս է ադմինիստրացիային կամ վարչությանը կոլեկտիվի անունով գրված ձև № 5 հաշվարկման անդորրագիրը: Հաշվարկման անդորրագիրը յուրաքանչյուր մուծման հետ միասին, ներկայացվում է վարկային հիմնարկությանը, վորն անդորրագրի մեջ նշանակումներ է կատարում: Հաշվարկման անդորրագրերը, բաժնեգրության թերթերի հետ միասին, դրամական փաստաթղթերին հավասար, պահվում են ադմինիստրացիայի մոտ, մինչև բաժնեգրության հաշվարկումների վերջանալը և պարտատոմսերը բոլոր բաժանորդներին լրիվ կերպով բաժանելը:

22. Հիմնարկ-ձեռնարկությունների համար պարտադիր է վարկային հիմնարկների հետ կատարել բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումներ, հետևյալ կարգով.—

ա) Հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները (ինչպես պետբյուջետային, նույնպես և տնտեսավարական) հերթական մուծումների գումարի համար գրում են չեկ կամ հրաման այն վարկային հիմնարկի անունով ուր ձևակերպված է բաժնեգրությունը: Այդ չեկերը, կամ հրամանները գրում են աշխատավարձի համար գրված չեկերից, կամ հրամաններից առանձին և վերջինիս հետ միասին հանձնում են վարկային հիմնարկությանն այն օրը, յերբ վորոշված է աշխատավարձը վճարել.

բ) կազմակերպության վարչությունը (ադմինիստրացիան) վորը բաժանորդներից գանձումներ է կատարում, գանձված գումարները հանձնում է վարկային հիմնարկին, գանձումները կատարելուց յերեք որից վոչ ուշ: Այն անձինք, վորոնք անօրեն կերպով ուշացնում են բաժնեգրության մուծումները, յենթարկվում են քրեական պատասխանատվության:

23. Համաձայն կոլեկտիվ բաժնեգրությունների պայմանների, (11–13 կետեր) հիմնարկները, ձեռնարկները և կազմակերպությունները պարտավոր են.—

ա) պարտատոմսի արժեքի մինչ ժամկետային վ–



ճարման դեպքում (հ. հ. 11 և 12, կետ ա.) հանձնել վարկային հիմնարկին բաժանորդի կողմից մուծված գումարը և ստանալ վճարված պարտատոմսերը, բաժանորդին հանձնելու համար, հանձնել վարկային հիմնարկությանը, բաժանորդի կողմից, վերադարձված ամրացման կտրոնները, պարտատոմսերով փոխանակելու համար: Յեթե բաժանորդը ցանկանում է անձամբ վճարել պարտատոմսի մինչ ժամկետային արժեքը—տալ նրան գրավոր հայտ, վարկային հիմնարկություն ներկայացնելու համար:

բ) ամիսը մեկ անգամ ներկայացնել վարկային հիմնարկության բաժնեգրության պակասեցման մասին տեղեկանք (հոդված 12, կետ բ.) նշելով՝ բաժնեգրության գումարը պակասեցնող բաժանորդի անուն ազգանունը և գումարը, վորը յուրաքանչյուր բաժանորդի կողմից պակասեցված է բաժնեգրությունը. այդ տեղեկանքների հետ ներկայացնել բաժանորդի կողմից հանձնված ամրացման կտրոնը պարտատոմսերով:

գ) ժամկետանց մուծումների դեպքում, (հոդված 13), ժամկետներից 20 որ անց, հայտնել վարկային հիմնարկությանը բաժանորդների անուն-ազգանունները, թե ո՞ւմ պարտատոմսերն են հետամրացման յենթակա, բաժնեգրության նախնական գումարը և յուրաքանչյուր բաժանորդի մուծած գումարը:

Վերոհիշյալ պահանջները չկատարելու և փոխառության իրացման ու բաժանորդներին սպասարկելու կարգը խանգարելու համար, վարկային հիմնարկները հարց են դնում, պատասխանատվության յենթարկելու հաշվարկային ձեռնարկության (հիմնարկության) ապպարատից պաշտոնական անձանց:

24. Ադմինիստրացիան, յուրաքանչյուր ամիս հայտնում է նոր աշխատանքի ընդունվածների մասին ոժանդակող հանձնաժողովին: Ստանալով ոժանդակող հանձնաժողովից, կոլեկտիվի նոր բաժնեգրվող անդամների բաժնեգրման թերթերը, ադմինիստրացիան ձևակերպում է և կատարում ընդհանուր կարգով հաշվարկում, վորը նշված է սույն հրահանգում:

## ՀԻՄՆԱՐԿ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

25. Ձեռնարկները, հիմնարկները և կազմակերպությունները ԽՍՀՄ. Ֆինժողկոմատի առաջ կրում են լրիվ պատասխանատվություն իրենց հանձնվող պարտատոմսերի և դրամական մուծումների պահպանման լրիվ լինելու համար: ԽՍՀՄ Ֆինժողկոմատը պատասխանատու չէ բաժանորդների առաջ՝ հիմնարկներին, ձեռնարկներին ու կազմակերպություններին տրվող պարտատոմսերի ու մուծումների պահպանման ու լրիվության համար.

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄՆ

26. Հիմնարկները, ձեռնարկները և կազմակերպությունները պարտավոր են բաժնեգրման թերթերի հիման վրա կազմել բաժանորդների անվանական ցուցակներ, նշելով՝ — ա) ամբողջ կոլեկտիվի համար ընդհանուր բաժանորդների հերթական №-ը. բ) բաժնորդի անունը, ազգանունը, և հայրանունը և գ) յուրաքանչյուր բաժնորդի բաժնեգրության գումարը բաժանելով ըստ մասերի և կուպյուրների:

Հաստատված ցուցակները հանձնվում են վարկային հիմնարկներին պարտատոմսերի առաջին մուծումը կատարելուց և բաժնեգրությունը ձեվակերպելուց հետո 20 օրից վոչ ուշ:

Ցուցակի մի օրինակը պահվում է վարչության մոտ (հիմնարկի):

Ցուցակների համաձայն, վարկային հիմնարկներն ամրացնում են յուրաքանչյուր բաժանորդին անկտրուստ մասի փոխառության պարտատոմսեր և միաժամանակ հավաքում են միատեղ տոկոսաբեր մասի պարտատոմսերը: Յուրաքանչյուր բաժանորդի համար միաողե ջոկված ամրացման տալոնները տրվում են վարչությանը (հիմնարկի)՝ անձնական հաշվում ձև № 5 կատարվող ստորագրությամբ: Հիմնարկի վարչությունը ստացված կտրոնները անմիջապես բաժանում է բա-



ժանորդներին իր դրամարկղային ապարատի միջոցով, ներգրավելով բաժանման աշխատանքներում նաև ուժանդակող հանձնաժողովներին: Յուրաքանչյուր բաժանորդ պետք է ստորագրի կտրոններն ստանալիս: Այդ ստորագրությունները պահվում են մինչեվ բաժանորդներին պարտատոմսերի բաժանումը վերջացնելը:

Ամրացման կտրոնները, վորոնք մինչ վիճակահանությունը չեն հանձնվել բացակայող բաժանորդներին, վարչությունը (հիմնարկի) պարտավոր է կնքել և պահել իր մոտ մինչ բաժանորդին հանձնելը:

Հիմնարկ-ձեռնարկներն ու կազմակերպությունները, վորպես կանոն, պարտավոր են վոչ պակաս քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ներկայացնել վարկային հիմնարկներին նոր բաժանորդների ցուցակը՝ նրանց անկտրուստ մասի պարտատոմսեր ամրացնելու և տոկոսաբեր մասի պարտատոմսեր ջոկելու համար:

Մինչեվ առաջին վիճակահանությունն անկտրուստ մասի պարտատոմսերի առաջին մուծումը կատարած բաժանորդներին՝ ցուցակի հանձնումը և նրանց պարտատոմսեր ամրացնելը, պետք է կատարվի այն հաշվով, վորպեսզի մինչեվ այդ վիճակահանությունն սկսելը բոլոր բաժանորդներն իրենց ձեռքին ունենան ամրացման կտրոններ:

Լրացուցիչ բաժնեգրությամբ պարտատոմսերի ամրացումը դադարեցվում է վիճակահանության օրվա նախօրեյին և վերսկսվում է տեղերում շահումների աղյուսակներն ստանալուց և դրանցով վարկային հիմնարկությունների կողմից պարտատոմսերի ստուգումն անցկացնելուց հետո:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ

23. Բաժնեգրության վերաբերյալ բոլոր հաշվարկումները վերջացնելուց հետո, վարկային հիմնարկները տալիս են վարչություններին՝ կոլեկտիվներին ամրացված, լրիվ մարված և յուրաքանչյուր բաժնորդի համար դասավորված անկտրուստ մասի պարտատոմսե-

րը, նաև բաժանորդների համար դասավորված տոկոսաբեր մասի պարտատոմսերը: Հիմնարկի վարչությունը անմիջապես պետք է բաժանի պարտատոմսերը բաժանորդներին իր դրամարկղային ապարատի միջոցով:

Բաժանորդը պարտատոմսերը ստանալուց պարտավոր է ստորագրել, վարչության մոտ պահվող ցուցակում և ստուգել անկորուստ մասի պարտատոմսերի №-ներն ամրացման կտրոնում հիշված համարների հետ: № №-ը չհամապատասխանելու դեպքում, սխալը պիտի անմիջապես ուղղվի վարկային հիմնարկում: Պարտատոմսերը ստանալուց բաժանորդները պարտավոր են վերադարձնել ամրացման կտրոնները, վորոնք յենթակա յեն հանձնման վարկային հիմնարկին:

28. Վորևէ մի պատճառով բաժանորդին չհանձնված պարտատոմսերը կարող են պահվել հիմնարկի վարչության մոտ յերկու ամսից վոչ ավելի, վորից հետո պիտի հանձնվեն վարկային հիմարկին, ցուցակով նշելով պարտատոմսատիրոջ ազգանունը, անունը և հայրանունը: Մինչեվ պարտատոմսատիրոջ հայտնվելը, վարկային հիմնարկությունը վերցնում է պարտատոմսերն ի պահ:

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

29. Վոչ բնակֆոնդի տներում ապրող անկազմակերպ ազգաբնակչության մեջ կոլեկտիվ բաժանորդագրության անցկացումը դրվում է հասարակական հրահանգիչների և խորհուրդների սեկցիաների կողմից նշանակված լիազորների վրա:

Վարկային հիմնարկները նշանակված անձերին հրահանգեր են տալիս և մատակարարում են բաժնեգրման թերթերով:

Անկազմակերպ բնակչությունից—բաժանորդները, վորոնք բնակվում են մասնավոր տներում, ընտրում են իրենց լիազորը, վորը կատարում է բաժնեգրության վերաբերյալ բոլոր հաշվարկումները և ձևակերպում է բաժնեգրությունը վարկային հիմնարկում: Բնակիչների



կողմից ընտրված լիազորը կրում է իր վրա պատասխանատվություն, իրեն ընտրող բաժանորդների հանդեպ: Ցինժողկոմատն այդ բաժանորդների հանդեպ լիազորի գործունեության համար պատասխանատու չի: Վարկային հիմնարկությունը հետևում է, վորպեսզի լիազորները բաժնեգրության դիմաց գանձումները կատարեն իր ժամանակին և հանձնեն այդպիսիք բաժնեգրությունը մարելու համար:

Մասնավոր տներում բնակվող բնակիչներից կոլեկտիվ բաժնեգրությանը կարող են մասնակցել այն անձինք, վորոնք զրկված չեն ընտրական իրավունքից. Հասարակայնացված բնակֆոնդի տներում բնակվող անկազմակերպ քաղաքային բնակչության մեջ, կոլեկտիվ բաժնեգրությունը կատարվում է, բնակարանային կազմակերպություններին կից ոժանդակող հանձնաժողովների կողմից: Այդ բաժնեգրությունը կատարելու համար—աշխատանքներում ընդգրկվում են նաև հասարակական հրահանգիչները: Ազգաբնակչության նման խմբակի բաժանորդների հետ, բոլոր հաշվարկումները դրվում են բնակարանային կազմակերպությունների վրա (բնակընկերությունների, կոոպերատիվների, տրեստների վարչությունների վրա):

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ

Սովորողների (աշակերտ–ուսանող) մեջ կոլեկտիվ բաժնեգրությունը տարվում է կրթական հիմնարկին կից ոժանդակող հանձնաժողովի միջոցով: Փոքր դըպրոցներում բաժնեգրության կատարման համար կարող են ընտրվել հասարակական բրիգադաներ՝ սովորողների, ուսուցիչների և դպրոցի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Սովորողների բաժնեգրության վերաբերյալ բոլոր հաշվարկման աշխատանքները դրվում են կրթական հիմնարկի վարչության վրա:

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ Մ Ե Ջ

31. *Թոշակառուների մեջ կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպելու համար ընտրվում են հասարակական բրիգադներ՝ թոշակառուների և տեղական խորհրդի կամ գործկոմի կից ոժանդակող հանձնաժողովի ներկայացուցիչներից։ Բաժանորդների բաժնեգրման թերթերը հանձնվում են այն խնայողական, կամ ապահովագրական դրամարկղները, վորոնցից թոշակ են վճարում բաժնեգրման թերթերի մեջ նշված անձնավորություններին։ Խնայողական կամ ապահովագրական դրամարկղն ընդունում է բաժանորդ թոշակառուներից նրանց թոշակը վճարելու ժամանակ անհատական կարգով նրանց հերթական մուծումները, համաձայն մաս-մաս վճարման համար սահմանված կարգի։ Թոշակառու բաժանորդներն ստանում են խնայողական դրամարկղից անհատական կարգով ամրացման կտրոնները, իսկ հաշվարկումը վերջանալուց հետո, իսկական պարտատոմսերը։ Ապահովագրական դրամարկղները թոշակառուների բաժնեգրությունը ձևակերպում և կատարում են վարկային հիմնարկների հետ, հիմնարկ-ձեռնարկների համար ընդհանուր կարգով սահմանված, հաշվարկումները։*

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

32. *Խմբակային կոմիտեների միջոցով միավորվող բանվոր-ծառայողների մեջ, կոլեկտիվ բաժնեգրություն տանում են խմբակներին կից ոժանդակող հանձնաժողովները։*

*Լրացված բաժնեգրման թերթերը, խմբակները հավաքում են իրենց մոտ և հանձնում այդպիսիք վարչություններին։ Խմբակներից ստացված բաժնեգրման թերթերի հիման վրա, համապատասխան հիմարկի վարչությունը, վորում աշխատում են փոխառության բաժնեգրվողները, կատարում է հաշվարկումներ, ընդհանուր*



*կարգով (վորպիսին նշված է սույն հրահանգում), բաժանորդների և վարկային հիմնարկների հետ։ Տնային աշխատակցուհիների և մասնավոր ձեռնարկներում զբաղված բանվոր-ծառայողների բաժնեգրության հաշվարկները խմբակային կոմիտեները վերցնում են իրենց վրա։ Խմբակներին սպասարկող վարկային հիմնարկների վրա չի ընկնում խմբկոմների կողմից բաժնեգրության հաշվարկները—խմբակային կոմիտեները վերցնում են իրենց վրա։ Խմբակներին սպասարկող վարկային հիմնարկների վրա չի ընկնում խմբկոմների կողմից բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումների ժամանակին կատարելու հսկողությունը։*

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ

33. *Փոխառության իրացումը Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի և Կարմիր նավատորմիղի մեջ, կատարվում է կենտրոնացած կարգով, համաձայն ԽՍՀՄ Ֆինժողկոմատի և ԽՍՀՄ Ռազմածովային Գործերի ժողկոմատի միջև կնքված պայմանագրի։*

*Կոլեկտիվ բաժնեգրության դեպքում՝ զինվորական ծառայողներին բաժնեգրության գումարի մուծումների համար տրվում է ժամկետ 12 ամսով, այն է՝ 1931 թ. հոկտեմբերի մեկից-մինչև 1932 թ. հոկտեմբերի 1-ը։*

*Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի և Կարմիր նավատորմի անձնական կազմի կոլեկտիվ-բաժնեգրության հաշվարկումները Ռազմա-Ծովային Կոմիսարիատը տանում է կենտրոնացած կարգով, Պետբանկի վարչության հետ։*

*Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Կարմիր Նավատորմիղի հիմնարկներում և մասերում բաժնեգրության հաշվառումը տարվում են զինվորական ոժանդակող հանձնաժողովների գծով, վորոնք հայտնում են բաժնեգրության մասին տեղեկություններ միայն Ռազմա-Ծովային ժողովրդ. Կոմիսարիատին*

կից ոժանդակող կենտրոնական հանձնաժողովին։ Ֆինանսական տեղական մարմինները, վարկային հիմնարկները և գործարկոմներին ու խորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները, զինվորական բաժնեգրության հաշվառում չեն տանում։

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Նավատորմիղի հիմնարկներին ու մասերին պարտատոմսեր և ագիտացիոն նյութեր մատակարարելու պարտականությունը դրվում է Պետբանկի և հիմնարկների վրա։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԻԱՑՅԱԼ ՊԵՏՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ՊԱՀԱԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՍԵՐԻ ՅԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՈՒ ՔՐԵՅԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ

Միացյալ Պետքաղվարչության մարմիններին և զինվորական մասերին, պահակային զորքերի մասերին և միլիցիայի քրեյական հետախուզության մարմինների անձնական կազմին՝ փոխառությունը կոլեկտիվ կերպով բաժնեգրվելու դեպքում, բաժնեգրության գումարի մուծումների համար տրվում է ժամկետ 12 ամսով։ Միացյալ Պետքաղվարչության մասերի և մարմինների ու պահակային զորքերի անձնական կազմն ստանում են ժամկետ 1931 թ. հոկտեմբերի մեկից մինչև 1932 թ. հոկտեմբերի մեկը, իսկ միլիցիայի և քրեյական հետախուզության մարմինների անձնական կազմը՝ 1931 թ. ոգոստոսի մեկից մինչեվ 1932 թ. ոգոստոսի մեկը։

Պարտատոմսերի արժեքի վճարները կատարվում են ամսական կամ կես ամսական հավասարաչափ մուծումներով։

Ժամկետի տևողությունը վորոշվում է առաջին մուծման ժամանակով։

Մյուս բոլոր խնդիրներում՝ Միացյալ Պետքաղվարչութան մարմինների մասերի, պահակային զորքերի մասերի, միլիցիայի և քրեյական հետախուզության



մարմինների անձնական կազմի կոլեկտիվ բաժնեգրության վրա տարածվում են բոլոր այն պայմանները, վորոնք սահմանված են բանվոր-ծառայողների կոլեկտիվների համար։

Միացյալ Պետքաղվաչրության մարմիններն ու մասերը, պահակային զորքերի մասերը և միլիցիայի ու քրեյական հետախուզության մարմինները բաժնեգրության ձևակերպումը բաժանորդների և վարկային հիմնարկների հետ կատարում են ապակենտրոնացման կարգով։ Այդ բոլոր մասերին ու մարմիններին պարտատոմսերի ամրացումը կատարվում է նույն կարգով, վորպիսին սահմանված է Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի զինվորական մասերի համար և նշված Պետբանկի վարչության և ԽՍՀՄ Ֆինժողկոմատի հատուկ հրահանգի մեջ։

Միացյալ Պետքաղվարչության մարմինները և զինվորական մասերը, պահակային զորքերի մասերը և միլիցիայի ու քրեյական հետախուզության մարմինները փոխառության գծով տարվող աշխատանքի համար ստանում են 0,5 տոկոս մասհանում, պարտատոմսերի համար վճարվող ընդհանուր գումարից։

Վարկային հիմնարկները, վորոնք բաժնեգրությունը ձևակերպել են, մասհանումները հանձնում են այդ մարմիններին և մասերին յերկու ժամկետով—այն է 1932 թ. ապրիլի մեկին և բաժնեգրության բոլոր հաշիվները փակելուց հետո (Միացյալ Պետքաղվարչության մարմինների և պահակային զորքերի համար 1932 թ. հոկտեմբերի մեկից հետո, միլիցիայի և քրեյական հետախուզության մարմինների համար՝ 1932 թ. ոգոստոսի մեկից հետո)։

## ՏՐԱՆՍՊՈՐՏՆԻԿՆԵՐԻ ՄԵՋ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

35. Տրանսպորտնիկների մեջ, կոլեկտիվ բաժնեգրությունը կատարվում է քաղաքային բանվոր-ծառայողների կոլեկտիվների հետ միահավասար պայմաններով։ Տրանսպորտի բաժնեգրության կազմակերպ-

ման պարտականությունը դրվում է յերկաթգծի, ջրային ճանապարհների հաղորդակցության և տեղական տրանսպորտի վարչությունների և, նրանց կից ոժանդակող հանձնաժողովների վրա: Վարչություններին յենթակա գծի վրա, փոխադրության իրացման անմիջական աշխատանքը տանում են յերկաթգծի շրջանները, շրջանային ոժանդակող հանձնաժողովի հետ միասին և նրանց համապատասխանող միավորները: Այլ տեսակի տրանսպորտի վրա, վորոնք հետագա բնաբանում (текст) ընդհանրացվում է շրջաններ հասկացողությամբ):

Շրջաններին հրահանգելը՝ բաժնեգրությունը կատարելու կարգի և նրա հետ կապված հաշվարկումների մասին, նմանապես շրջանների, այդ աշխատանքի համար պատասխանատվությունը դրվում է Պետբանկի տեղական հիմնարկի վրա, վորի հետ շրջանները կապված են հաշվադրամարկղային գործառնությամբ և վորի հետ նրանք պետք է տանեն իրենց բոլոր հաշիվները, ըստ փոխառության բաժնեգրության: Բաժնեգրության անցկացման գործում շրջանները կատարում են նույն պարտականությունները, ինչ վոր դրված են հիմնարկձեռնարկների վրա:

Մասնավորապես շրջանները պարտավոր են ա) ժամանակին ձևակերպել Պետբանկի հիմնարկում իրենց յենթակա շրջանում տրանսպորտի վրա աշխատող բանվոր-ծառայողների բաժնեգրությունը. բ) բաժնեգրման թերթերի վրա բանվոր-ծառայողների կողմից տված հանձնարարությունների համաձայն կատարել պահումները բաժնորդների աշխատավարձից, պարտատոմսերի արժեքները մարելու համար, գ) ժամանակին հանձնել պահված մուծումները Պետբանկի այն հիմնարկը, ուր ձևակերպված է բաժնեգրությունը. դ) Պետբանկի հիմնարկից ստանալ ամրացման կտրոնները առանձնացված փաթեթներով, յուրաքանչյուր բաժանորդի համար առանձին՝ բաժնեգրության հաշիվները փակելուց հետո ստանալ պարտատոմսերը՝ բաժանորդներին հանձնելու համար, ե) համապատասխան ձևով



պահել թե իսկական պարտատոմսերը և թե ամրացման կտրոնները, ժամանակին բաժանել կտրոններն ու պարտատոմսերը բաժանորդներին:

Դիրեկցիաների վրա չե դրվում իրենց յենթակա շրջանների բաժնեգրության անցկացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը և շրջանների կողմից փոխառությունների իրացման պայմանների և բաժնեգրության հաշվարկման կարգի ճիշտ կատարման հսկողությունը: Տրանսպորտնիկների կոլեկտիվների բաժնեգրությունը ձևակերպվող Պետբանկի հիմնարկներն սպասարկում են այդ կոլեկտիվները բանվոր-ծառայողների քաղաքային կոլեկտիվների հետ միահավասար հիմունքներով: Տրանսպորտնիկների բաժնեգրության ստուգիչ թվերը, տրված են ճանապարհների հաղորդակցության և ջրային ժողկոմատներին կից ոժանդակող հանձնաժողովների կողմից բոլոր վարչություններին, վերջինները, նույն քաղաքում գտնվող պետաշխնայդրամարկղների և պետվարկի հիմնարկների ու Պետբանկի հիմնարկների հետ միասին բաշխում են ստուգիչ թվերն ըստ յերկաթգծի և տրանսպորտային շրջանների ոժանդակող հանձնաժողովների: Տրանսպորտնիկների բաժնեգրության ստուգիչ թվերը մտնում են ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից, Ֆինմարմիններին տված ընդհանուր ստուգիչ թվերի մեջ: Ֆինմարմինները պետաշխնայդրամարկղների և պետվարկի տեղական հիմնարկների միջոցով իրագործում են տրանսպորտային ոժանդակող հանձնաժողովների և տրանսպորտի վրա բաժնեգրությունը կատարող պետբանկի հիմնարկի աշխատանքների ընդհանուր հսկողությունը և ղեկավարությունը:

Ծանոթություն.—Տրանսպորտային մարմիններին և ոժանդակող հանձնաժողովներին ագիտացիոն-գործառնական նյութերով մատակարարումը, կատարվում է մինչ կամպանիայի սկիզբը կենտրոնացված կարգով, Մոսկվայից, դիրեկցիայի միջոցով: Կամպանիայի ընթացքում տեղական տրանսպորտային մարմիններին և ոժանդակող հանձնաժողովներին նյութե-

բով ապահովելու պարտականությունը դրվում է Պետբանկի հիմնարկների վրա:

36. Պետբանկի հիմնարկները տրանսպորտային շրջանային ոժանդակող հանձնաժողովներին հանձնում են 0,3 տոկոսի չափով մասհանումներ, պարտատոմսերի համար շրջանից ստացվող յուրաքանչյուր գումարից:

Շրջանային հանձնաժողովները, ստացած մասհանման մի 3-րորդը փոխադրում են վարչության կից ոժանդակող հանձնաժողովին:

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՍԵԶՈՆՆԻԿՆԵՐԻ ՄԵՋ

37. Սեզոնային բանվորների մեջ, կոլեկտիվ բաժնեգրությունը տարվում է այն տնտեսական տեղական պրոֆկազմակերպությունների և պետվարկին ու խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովների կողմից, վորտեղ աշխատում են սեզոնային բանվորները: Սեզոննիկների հոսունության հետևանքով նրանց մեջ բաժնեգրությունը կատարվում է հետևյալ պայմաններով. սեզոնիկները կարող են վճարել պարտատոմսերի արժեքը թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարով: Մաս-մաս տրվում են այն ժամանակաշրջանի համար, վորքան սեզոննիկը մնալու յե աշխատանքում: Մուծումների գումարները պահվում են բաժանորդին տրվող աշխատավարձից: Պահումների չափը վորոշում է վարչությունը՝ գործարկոմների և ոժանդակող հանձնաժողովների հետ միասին, նայած, թե քանի անգամ աշխատավարձը պիտի ստանա բաժանորդը, իր աշխատանքի ամբողջ ժամանակվա ընթացքում:

Յուրաքանչյուր մուծման ժամանակ բաժանորդին տրվում են մուծման գումարի հավասար պարտատոմսեր: Այդ իսկ պատճառով ցանկալի յե, վորպեսզի մուծման գումարը հավասար լինի պարտատոմսերի կուպյուրների մեկին (5 կամ 10 ռուբլի և այլն): Բաժանորդից փոքր մուծում ստանալու դեպքում պարտատոմսը տրվում է այն ժամանակ, յերբ մուծումների գումարով հնարավոր կլինի ծածկել պարտատոմսի արժեքը: Սեզոննիկների հետ հաշիվները փակելու համար վարկա-



յին հիմնարկները կարող են տալ կազմակերպություններին ավանսով պարտատոմսեր: Վարկային հիմնարկների վրա յե դրվում հսկելու տնտեսական կազմակերպությունների կողմից պարտատոմսերը պահելուն և բաժնեգրության մուծումներն իր ժամանակին և լրիվ հանձնելուն:

Վիճակահանությունից 5 որ առաջ վարկային հիմնարկները պարտավոր են լրիվ հաշվարկում կատարել տնտեսական կազմակերպությունների հետ և պահանջել նրանցից չիրացված պարտատոմսերը: Դեպոզիտային պարտատոմսերը շահումների աղյուսակներով ստուգելուց հետո, վարկային հիմնարկները նորից տալիս են տնտեսական կազմակերպություններին ավանսով պարտատոմսեր:

## 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

38. Անհատական բաժնեգրության մաս-մաս վճարման կարգով պարտատոմսերի վաճառքը կատարվում է ըստ պարտատոմսի անվանական արժեքի: Անհատական բաժանորդներին ժամկետ է տրվում մինչև 1932 թվի հունվարի 1: Բաժանորդը պարտավոր է մարել պարտատոմսի արժեքը չորս հավասար մուծումներով, վորոնցից առաջին մուծումը կատարվում է բաժնեգրվելու մասին, Հայտարարություն տալու ժամանակ, մինչև 1931 թվի սեպտեմբերի 1-ը, յերկրորդ մուծումը՝ մինչև 1931 թվի նոյեմբերի մեկը, յերրորդ մուծումը՝ մինչև 1931 թ. դեկտեմբերի 1-ը և չորրորդ ու վերջին մուծումը՝ մինչև 1932 թ. հունվ. 1-ը: Առաջին մուծումը կատարելիս, բաժանորդին տրվում է անվանական, կամ ըստ նրա ցանկության, ըստ ներկայացնողից (пред явительская) ժամանակավոր հաշվարկային անդորրագիրը: Անվանական կամ ըստ ներկայացման անդորրագրերը կորցնելու դեպքում, գործում են ընդհանուր սահմանված կարգով: Անհատական բաժանորդներին պարտատոմսերի նախնական ամրացում չի կատար-

27974

*վում: Վերջին մուծումը կատարելիս, վարկային հիմնարկը բաժանորդին տալիս է լրիվ մարված պարտատոմսերը: Բաժանորդը կարող է մինչ ժամկետը վճարել պարտատոմսի արժեքը և ստանալ այդպիսիք: Եթե բաժանորդը վերջնական հաշիվը փակելուց հետո, վորևե պատճառով չի ստանում պարտատոմսը, ապա վարկային հիմնարկը ամրացնելով նրան մարված պարտատոմսերը՝ վերցնում է այդպիսիք ի պահ, մինչև պարտատոմսատիրոջ հայտնվելը: Մինչև 1932 թվի հունվարի 1-ը բաժնեգրության բոլոր մուծումները չկատարելու դեպքում բաժանորդին ամրացվում են նրա մուծումների գումարի համեմատ պարտատոմսեր, վորպիսիք փոխանցվում են ի պահ:*

Ծանոթություն.—*Վարկային հիմնարկներն անհատական բաժնեգրությունների համար, հաշվային անդորրագրերը պատրաստում են իրենք, իրենց հաշվին և բաժնեգրության պայմաններին համապատասխանող ձևերով:*

## 4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՔԸ.

39. *Պարտատոմսերի կանխիկ վաճառքը, նրանց արժեքի միանվագ մուծումով, կատարվում է մինչև 1931 թվի դեկտեմբերի 1-ը, անվանական գնով, վորից հետո՝ տեղեկատու գներով: Պարտատոմսերի կանխիկ վաճառքը կատարում են փոխառության իրացման աշխատանքներում ներգրավված բոլոր վարկային հիմնարկները:*

ԽՍՀՄ Ֆինժողկոմատի Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր կառավարչության պետի տեղակալ՝

ՏԱՄԱՐԿԻՆ

Կոնսուլտանտ՝ ՑԱԳՈԴԻՆՍԿԻ

*«ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է»*

Պետբանկի վարչության ա...

Պետվարկի բաժնի դիրեկտ...

*ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ*

Պատվեր 3157 • Դրանեպգլխվար 6531 (

ՀՀ Ազգային գրադարան
NL0208388